**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՍՏՂԱԶՈՐԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾՈՎԱՍԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

26.06.2025

Տիպ՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ
Հայտատու՝ Մարտունու համայնքապետարան
ՀՀ ՏԿԵ նախարարի 26.03.2020 թվականի թիվ 02-Ն Հրաման

Մարտունու համայնքապետարանը հայտարարում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայր, 6 փողոց, 30.52),Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Ծովասար բնակավայր 1 փողոց, 11/1 շենք ) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներ (այսուհետ՝ Մրցույթ):

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝ իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի թիվ 20-Ն հրամանով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված գործառույթները:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրենի ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 215 000 (երկու հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրենի ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 208 000 (երկու հարյուր ութ հազար) ՀՀ դրամ : Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք՝

1) ունեն բարձրագույն կրթություն.
2) բավարարում են «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Տնօրենների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթներին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) ովքեր դատապարտվել են հանցագործության կատարման համար, և նրանց դատվածությունը մարված կամ վերացված չէ.
2) որոնց օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ովքեր զրկվել են որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
3) ովքեր նախընթաց երեք տարիների ընթացքում եղել են սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.
4) 65 տարին լրացած քաղաքացիները.
5) ովքեր ներկայացրել են փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

Մրցույթները կկայանան 2025թ. հուլիսի 28-ին՝ ժամը 12:00-ին, Մարտունու համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 2):
Մրցույթներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Դիմումներն ընդունվում են Մարտունու համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին, ամեն օր, ժամը 09:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ, կիրակի օրերից (հասցեն ք. Մարտունի, Շահումյան 2, հեռ.՝ 077779127):
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2025թ. հուլիսի 14-ին ժամը 18:00-ն:
Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնն

զբաղեցնելու համար հայտարարված մրցույթն անցկացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներին համապատասխան:
Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի մրցույթը անցկացվում է մեկ փուլով՝ հարցազրույցի միջոցով:
Մրցույթի համար դիմած անձը մրցույթին մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և այլ տեղեկությունների համար կարող են դիմել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ (ք.Մարտունի, Շահումյան 2, հեռ.՝ 077779127):

Մարտունու համայնքապետարան

Հասցե՝ ք.Մարտունի , Շահումյան փ 2

Հեռ..՝ 077779127

Վեբ կայք՝ www.martuni.am

Էլ. փոստ՝ info@martuni.am

Մարտունու համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Երանոսի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

26.06.2025

**Տիպ՝ <u>Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ</u>**

**Հայտատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան**

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետով՝ Մարտունու համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Երանոսի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

«Ծովասարի մշակույթի կենտրոն», «Երանոսի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1/ բարձրագույն կրթություն,

2/հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ՝ հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի հավելվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը,

3/ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք, Աշխատանքային օրենսգիրք, Գնումների մասին ՀՀ օրենք, ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/:

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

3/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ, ենթակաների հետ վարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,

4/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Երանոսի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 158 000 ( հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը և բարձր լեռնային հավելավճարը:

Մրցույթը կկայանա 2025 թվականի հուլիսի 28-ին ժամը 11:00-ին, Մարտունու համայնքապետարանում /հասցե՝ Շահումյան 2/:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում,
2) 1 լուսանկար 3Х4 չափսի,
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին,
4) ինքնակենսագրություն,
5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/,
6)տեղեկանք մշտական բնակության վայրից,
7) հրապարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:
Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Մարտունու համայնքապետարանում /ք. Մարտունի Շահումյան 2/:

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 077 77-91-27
Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի հուլիսի 14-ը ներառյալ:

**Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի Շահումյան 2**
**Հեռ..՝ 077-77-91-27**
**Էլ. փոստ՝ ՝ info@martuni.am**